ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի «Ձորաղբյուրի Վ. Կարապետյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցչի (դասվարի) թափուր տեղի (շաբաթական 14 դասաժամ) համար հայտարարվում է մրցույթ:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումը անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափսի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են սեպտեմբերի 05-ից սեպտեմբերի 16-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 9^{00}-ից 15^{00}-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 22-ին՝ ժամը 15^{00}-ին:
Մրցույթը տեղի կունենա Կոտայքի մարզի «Ձորաղբյուրի Վ. Կարապետյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:
Հասցե՝ գ. Ձորաղբյուր, Լուսավորության 20:
Տեղեկությունների համար զանգահարել/ 099/-32-17-13 կամ /077/-53-71-53: